Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1643/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 մայիսի 2023 թվականի

ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով հայցվոր «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Ջերմուկի համայնքապետարանի՝ Ջերմուկի համայնքապետարանի կարիքների համար Ջերմուկ քաղաքի Զատիկ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.03.2023 թ. հայտարարված թիվ ՋՀ-ԳՀԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2023 թ նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված ԳԱՊ ՇԻՆ ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Ա. Սաֆարյանին:

03.05.2023 թվականի Դատարանի որոշմամբ հայցադիմումը կից փաստաթղթերով վերադարձվել է հայցվորին՝ հայցադիմումում թույլ տրված խմբագրությունները վերացնելու և կրկին դատարան ներկայացնելու համար:

19.05.2023 թվականին հայցվորը Դատարանի 03.05.2023 թվականի որոշման մեջ նշված թերությունները վերացնելուց հետո կրկին Դատարան է ներկայացրել հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Մարինա Տաշչյանին:

Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով դատավորին է հանձնվել 24.05.2023 թվականին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ,ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Տվյալ դեպքում, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/1643/02/23 քաղաքացիական գործով ,տք է նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-դ, 199-րդ, 200-րդ, 234.9-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Ջերմուկի համայնքապետարանի՝ երմուկի համայնքապետարանի կարիքների համար Ջերմուկ քաղաքի Զատիկ մանկապարտեզի ոմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.03.2023 թ. հայտարարված թիվ ՋՀ-ՀԱՇՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2023 թ նիստի ով 3 արձանագրությամբ կայացված ԳԱՊ ՇԻՆ ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն նվավեր ճանաչելու /վերացնելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/1643/02/23 քաղաքացիական գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ ատական ակտը հրապարակել 23.06.2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական այքի միջոցով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԵ ՏԱՇՉՅԱՆ**